

ժամ ի հիւսիս. ջրաբաշխի շղթային վերայ գեղեցիկ դերք մուսիսի վճիտ) քաղցրահամ խղրերակունք. ի հիւսիս յարեւելս և ի հիւսիս արեւմուտքս կարճակէ ջրերս որք խորանդունդ ձորակներ կաղմած են. տեանողին զգալնել կտան թէ իրաւամբ այս ձորերից մին Վիշապածոր անուն առած է, որ ըստ ժողովրդեան Վարդէհօր ջուր կասուի:

Այս լեռը ի հարաւոյ կալոյի ձորին կը պարգեւէ առատ ջուր, որ միանալով Զամէէէ իջած ջրին՝ առաջ կգնայ մինչև Երեւան:

Նաև արեւմտեան հիւսիսէ կապուտայ Մատու մի ջուր կարճակէ, որ աջ կողմից կապուտայ ձորն կիջնայ, ուստի Երասխ կը թափի:

Թանգուրակ 1. — Զամէէ լեռնէ յարեւելս բաւական հեռաւորութեան վերայ նաև այս շղթայի հիւսիսային երեսին վերայ, Գարաքիլիսէի արեւելեան հիւսիսն 6 ժամ հեռուն կայ, և մեծ ձորակներ կարճակէ ի հիւսիս, որք ինձէ և Փառնակուտ ջուր անուններով Երասխ կը թափին:

Աստի սար. — Մինակ լեռներու արեւմտեան հիւսիսն, Զամէէի արեւելեան հարաւն Աշակերտի դաշտի վերայ կը հայի. որ սկզբնաւորութիւն կտայ, ըստիւ ի հնոց անուանած Աշտից մեծ ձորոյն, որ այժմ Ախտայ կամ Թէմի — չաթոյի ջուր կասուի:

Մինակ. — Այս լեռներն Ախտայի մօտէն կսկսին բարձրանալ և տարածուիլ այնպէս որ դաշտային մասն տակաւ առ տակաւ բռնելով՝ հարաւային կողմէ կեառկեառ, կօլասօր և Գաշլիչայ Պարսիկ գիւղերու մօտ. Մուրատի աջ եզրն կընդհատի, որով Աշակերտի դաշտն Զիրաւայ դաշտից կը բաժանուի. Մինակ գագաթից իւր ուղղութիւնը յարեւելս երկար շտրունակելով՝ կը հասնի Գայլատոյ ծովակն, որ Մինեկայ <sup>2</sup> կը պատկանի և այլ և այլ անուններ

Խաչատուր վարդապետն, որ ամբողջ Բագրեանդայ հայ ժողովրդեան ընէսներն հաւաքեց, որոց հետ խորհուրդ կազմելով զինեցին ամբողջ ժողովուրդն, պատերազմեցան պարսից հետ:

1. Երկու Թանտուրակ լեռներ կան մին Ալատաղի մէջ ի հարաւ նպատայ, երկրորդն այս:

2. Որպէս Թանգուրակայ հովիտներու մէջ՝ նոյն.

ներ առած լեռներով շրջապատած է. աստի ևս այս շղթայն այլ և այլ անուններով կը հասնի Մասիս. որ կայ ուղղակի յարեւելս կոյս:

Մինակ լեռներու հիւսիսային կողմն կայ Գանտիլի գեռան (սկիւայ կանթեղ կամ լեռ), իսկ շղթային վերայ Ղզըլ — Զիրաէթ (կարմիր ուխտ) լեռն, որ շղթայի վերան է, որոյ գագաթը կը դանուի մատուռ մի մատուռի տակից երկու ջրաղաց դարձնելու ջուր կը բռնի և ին:

(Շարունակելի).

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՆԵՄԵՆ ՊԱՐՏԵՔԻ ՄԵՍԻՆ.

(Շարունակումը) \*  

 Եւրոպայի, որ 16-րդ դարու Ֆրանսիական փրկիստիայ է, բարոյական կրթութեանը տալիս է առաջին տեղը: Նա մեղադրում է իր ժամանակակից մանկավարժներին իմաստակութեան (պետանտիզմ)

մէջ: Այդ միջոցին իմաստակութիւնն արտայայտուում էր երկու տեսակ աշխատում էին սովորեցնել, ոյժ տալ նուրբ և փքուն մտածողութեան և յիշողութիւնը ծանրաբեռնում էին զանազան բաներով, անուշադիր թողնելով զիտակցական խելամուտութիւնը: Մօնտէյնը որոշում է թէ ինչպէս էր կամենում բարեփոխել կրթութիւնը և ինչպէս էր մտադիր փոխել այն կրթական եղանակը (մեթօդ), որ արգելք էր դառնում խորհեցողութեան և դատողութեան, զարգացնում էր միայն յիշողութիւնը: Նա ասում է, որ երեխային պէտք է պատուաստել այն ընդհա-

պէս Մինեկայ լեռնագաւտի և հովիտներու մէջ 25 գիւղ եղտի ժողովուրդ կայ, նոյնչափ մի ևս քուրդ թուրք ժողովուրդ:



նուր յատկութիւնները որոնք մարդուն դարձնում են ողջամիտ և կորովամիտ: Մօնտէյնը հաստատում է, որ կրթութիւնը չը պէտք է նպատակ ունենայ պատրաստել մասնագէտներ, զոր օրինակ արուեստաւորներ, պրօֆէսօրներ, այլ երեխային կատարեալ մարդ դարձնելը (Թէպէտե Մօնտէյնը փոքր ինչ սիրում է ազատութիւն տալը և բնաւորութիւնը յարգում է, բայց այնուամենայնիւ չի կարծում, որ երեխային կարելի է իր կամքին թողնել և իր «կրթութեան փորձում» ասում է, որ երեխային պէտք է յանձնել մանկավարժին կրթելու: Նա շեշտելով ասում է, որ պէտք է զխաւորապէս զարգացնել աշակերտի բարոյական սկզբունքը և դատաւորութիւնը: Հետեւաբար նա խորհուրդ է տալիս ուսուցիչներին զարգացնել աշակերտի գիտակցական ինքնուրոյնութիւնը, նախաձեռնութիւնը: Այդ ցանկութեանը հասնելու մեջոցներից մէկն է երիտասարդին վաղօրօք զցել մարդկային կեանքի հոսանքի մէջ (!): Առարկաներ դիտելը, որ այժմ անուանուում է իրազնական ուսում (leçon de choses) Մօնտէյն անուշադիր չէ թողել իր կրթական ծրագրի մէջ: Պատմութիւն գիտենալուն Մօնտէյնը մի մեծ կարեւորութիւն չի տալիս, այլ ասում է, որ կարեւոր է պատմութիւնից եղրակացնել այն բարոյական հիմունքը, որ պիտանի է: Որքան խօսուեց Մօնտէյնի մասին, բաւական է, որ մի ճիշտ գաղափար ունենանք նրա խելացի կերպիւ բարեփոխած մանկավարժական եղանակի վերաբերմամբ: Գիղօն հետեւեալ գովասանական խօսքերն է ասում նրա մասին, թող կատարեն ինչ որ Մօնտէյնն առաջարկում է, թող հետեւեն նրա խորհուրդներին, կարելի է դրանց վրայ էլի բան աւելացնելու հարկաւորութիւն լինի, եթէ աշակերտին աւելի սովորցնելու կարեւորութիւն լինի քան թէ նա՝ Մօնտէյն է առաջարկում, բայց պէտք է ընթանալ նրա առաջարկած ծանապարհօյի թէ և նա շատ բան չէ ասել, բայց ինչ որ ասել է՝ ուղիղ է, ուրեմն առաջ պէտք է Մօնտէյնի գաղափարներն ուսումնասիրել

և յետոյ միայն նորանից յաջորդողներին: Ռաբլէ: Ֆրանսիական վերածնութիւնը չէ ունեցել կրթութեան գործում մտաւոր զարգացման աւելի ազդու նորոգիչ, աւելի ինքնուրոյն հնարագէտ մարդ՝ քան Ռարլէն: Նրա շարադրութիւնը «Գարգանդիւ» և «Պանտագրիւ» պարունակում են նորագոյն մտաւոր կարգացման առաջին ծրագիրը, թէպէտե ունին իրենց անհաճոյ և տարօրինակ կողմերը: Ռարլէն իր ամբողջ կեանքում ունեցել է մի ցանկութիւն, այն է՝ ճշմարտութեան ուսումնասիրութիւն և գիտութեան սէր: Գարգանտիւայի և Պանտագրիւէլի մէջ ուսուցիչը և աշակերտը զբաղուած են աւելի տեսական կեանքով, որպէս գիտնականներ և բանաստեղծներ և ոչ իրական կեանքով: Նա ձգտում է դէպի գաղափարականը, որ չը պէտք է արհամարհել, որ և միշտ բարձր է դասուել:

Նա ասում էր «առողջ խելքը կարող է լինել միայն առողջ մարմնում», նրա ծրագիրն ուղղած էր մարդու ամբողջութեան վրայ, նա մենակեաց չէր իր զբաղարանում, բայց նա ասում էր, թէ այն մարդը, որ նշանակուած է գործնական և քաղաքացիական կեանքի համար, ունի պարտաւորութիւններ դէպի իր ազգը: Նրա վերոյիշեալ հեղինակութեանց մէջ՝ աշակերտը յանձնուած է պատուական ուսուցիչ Պանքրատին, ուրեմն չի կրթուում այնպէս, ինչպէս սովորաբար կրթուում են մի ուսումնարանում, բայց հիմնական սկզբունքը, որի վրայ նա հիմնում է այդ կրթութիւնը, կարելի է իրագործել միայն մի ուսումնարանում: Նա ընդունել է որպէս կրթութեան եղանակ կեանքի բնական ընթացքը, տնային կերպիւ օգտուում է առօրեայ դէպքերից, իսկ կրթութեան ընթացքի կանոնադրութիւնը գտնուում է Պանքրատի հայրական տրամադրութեան ներքոյ: Այդ իսկ Սօկրատական կրթութիւնն է, ուր մարդկային և աշակերտական խելքը թափանցում են մէկը միւսի մէջ: Ուսումը կատարուում է խօսակցութեամբ, զրօսանքի ժամանակ, որ լի է գիտողութեամբ և



օգտաւէա խորհրդածութեամբ ու յաճախակի պատահմամբ զիտնականներէ հետ:

Եւն Կոմէնի (Կոմէնիսկի) 1592—1671. Ծնունց Մոտաւիայում՝ Ունգարիայի սահմանի մօտ: Կոմէնիսկին աւելի յայտնի է Կոմէնիոսի անունով: Պէտտալօցցու նախնիթաց մանկավարժներից ամենեւեւէին է: Միլլէն նրան անուանում է, «իսկ գործնական կրթութեան հայր»: Մեծ մանկավարժի անունը նա ստացել է զրելով հետեւեալ երեք աշխատութիւններն, այն է.— Մեծ վարդապետութիւն (Didactica Magna), Լեզուների դուռն (Janua linguarum) և Պատկերազարդ աշխարհ (Orbis pictis):

Կոմէնիոսի «Մեծ վարդապետութիւնը» ամենանշանաւոր աշխատանքներից մէկն է, որ գրուել է մանկավարժական գիտութեան մասին: Առաջին 12 զուխներում հեղինակը բացատրում է իր վարդապետութեան ընդհանուր սկզբունքը: Մասում է մարդը պէտք է ունենայ գիտութիւն և բարոյական ու կրօնական զգացմունք: Որանց սեմերը կան մարդուս մէջ, բայց կրթութիւնը հարկաւոր է դրանց զարգացման համար: Երկու սեռի երեխաներն էլ հարկաւորութիւն ունին կրթուելու: Այդ կրթութիւնը պէտք է դրանց տան հասարակաց ուսումնարաններում, որոնք պէտք է նոյնպէս կազմակերպուած լինին, որ երեխաները կարողանան ստանալ կատարեալ կրթութիւն: Հետեւեալ զուխներում Կոմէնիոսը պարզում է իր ծրագիրը և կրթական եղանակը: Ռաստիարակչական հմտութիւնը նա պահանջում է իրերի և ժամանակի կանոնաւոր գործադրութիւն: Ամենից առաջ նա պահանջում է ֆիզիքական կրթութեան իրադրծումը, յետոյ նա բացատրում է իր մանկավարժական եղանակի մասնաւոր սկզբունքը: Մասում է, ուսուցանելը պէտք է լինի զիւրին, հիմնաւոր, արագ, պէտք է համապատասխանի ողջմտութեանը, տայ աշակերտին գործնական տեղեկութիւններ առարկաների մասին: Կոմէնիոսը յաճախ կրկնում է այն երեւելի կարծիքը՝ թէ մտախոհութեան մէջ չը կայ ոչինչ, որ չանց-

նի մարդուս մտքով, այսինքն չը կայ ոչ մի գաղափար, որ ծագի առանց զգայարանների միջնորդութեան, ամեն մի առարկայ պէտք է այնքան անգամ ցոյց տալ աշակերտներին, որ նա ըմբռնի նրա որպիսութիւնը աչքով, ականջով, մտքով, հոտաւէա իրերը՝ հոտառութեամբ, կարծր իրերը՝ համով, շօշափելու իրերը՝ շօշափմամբ և այլն:

Սօսքեր սովորելը պէտք է կատարուի իրեր անուանելիս, բարոյական և կրօնական ուսումը պէտք է կատարուի որոշ կերպիւ, այն է աշակերտը պէտք է սովորի զսպել իրեն, ուղղութիւն տալ իր ցանկութիւններին, սիրէ բարին յանուն բարեսիրութեան:

«Պատկերազարդ աշխարհ» ամենից աւելի հռչակեց Կոմէնիոսի անունը: Սկզբում զբաղում է մի այրբենարան, որի իւրաքանչիւր տառը համապատասխանում է մի որևէ անասունի ձշին կամ երեխային ծանօթ մի որևէ ձայնի: Գրքի զուխները պատկերազարտ են, ունին համարներ, որոնք համապատասխանում են բնագրի որոշ խօսքերին և կարծ դարձուածներին:

Յառաջաբանի մէջ հեղինակն ասում է. «հմտութիւնը կայանում է նորանում, որ առարկան ներկայացնուի աշակերտի զգայարաններին այնպէս, որ նա հեշտութեամբ ըմբռնի»: Այս է մանկավարժական գործունէութեան հիմքը, որովհետեւ մենք չենք կարող ոչ գործել, ոչ խելօք խօսել՝ եթէ չը գիտենանք, թէ ինչ ենք ցանկանում անել կամ ասել: Ի հարկէ իմացականութեան մէջ չը կայ ոչինչ, որ առաջուց մտքով անցած չը լինէր, այդ պատճառով էլ այդ է հիմքը բոլոր իմաստութեան, ճարտարութեան, բարի և խելացի գործողութեան, հէնց այդ պատճառով էլ պէտք է խնամքով վարժել խելքը, միտքը, զգայարանները, որ աշակերտը լաւ ըմբռնի բնական իրերի զանազանութիւնները և յատկութիւնները, հէնց այդ է, որ այժմեան ուսումնարաններում սովորաբար անուշադիր է թողնուում: Երբեմն աշակերտին սովորցնում են այնպիսի բաներ, որ նա չի կարողանում ըմբռնել և այդ պա-



տահումէ այն պատճառով որ չեն ներկայացնում նրա զգայարաններին, նրա երեւակայութեանը այդ իրերը ինչպէս հարկն է: Այդ է պատճառը, որ մի կողմից սովորցնելը դժուարանում է, իսկ միւս կողմից էլ լինում է անպտուղ:

Պէտք է ասել, որ կօմէնիուսը չը կարողացաւ բաւարար կերպով իրագործել իր ծրագիրը, որ շատ լաւ նախագծած էր: Բացի այդ կօմէնիուսը ոչինչ հաստատ և վերջնական մի բան չստեղծագործեց, նա միայն մի զարմանալի առաջընթաց մարդ էր:

Լօէ: Սա գլխաւորապէս մի կատարելագործումած մարդ էր, քննում էր հոգու տարրերը: Հոգեբանութիւնից մանկավարժութեան անցնելը հեշտ բան է և նա չէր կարող դժուարութեանց հանդիպել, եթէ ցանկանար իր գիտութիւնը կանոնաւոր կերպով գործադրել, մարդկային խելքը բնական եղանակով կրթելու, ուղղութիւն տալու համար 1693 թ. նա հրատարակեց «Իմ կարծիքը մանկավարժութեան մասին» անունով գիրքը: Այդ աշխատանքի համար նա պատրաստուած էր երկարամեայ փորձառութեամբ: Իր ծանօթ ընտանիքներում, ուր նա յաճախում էր, լաւ ուսումնասիրեց երեխաներին և կորովամտութեամբ ուսումնասիրելով նրանց բնաւորութեան զարգացումն, հոգին, կարողացաւ մանկավարժական փորձառութիւն ձեռք բերել և գրել «Իր կարծիքը մանկավարժութեան մասին»: Այդ գրուածից կարելի է եզրակացնել 3 սկզբունք. — 1) Ֆիզիքական կրթութեան մէջ մարմնի ամրապնդութեան սկզբունքը, 2) բարոյական կրթութեան մէջ պատուոյ զգացմունքի սկզբունքը որպէս կանոն քաղաքացիական կեանքի, 3) գործնականութեան սկզբունքը:

Լօքէն չի կամենում պատրաստել մասնագէտներ, գիտնականներ, այլ գործնական մարդիկ, որոնք ունենալով զանազան տեսակ կարեւոր գիտութիւններ, կարողանան մաքառել կեանքի դժուարութիւնների դէմ կարողանան կառավարել իրենց ունեցածը, հմուտ լինեն իրենց արուեստում, վերջապէս կարողանան

կատարել իրենց պարտաւորութիւնները՝ որպէս քաղաքացի:

Լօքէն առանձին խնամքով մշակել է իր դրուածքի այն մասը, որ վերաբերում է բարոյական կրթութեանը: Լոկ միայն զիտութիւնը նրա համար առանձին նշանակութիւն չունի:

Նա ասում է, մի ազնուական բացի իր որդուն թողած հարստութիւնից՝ պէտք է աշխատի, որ նրա որդին լինի առաքելին, խոհեմ, զիտուն, ունենայ շարժուածքի լաւ ձևեր:

Լօքէն ընդունեց նաև Մօնտէյնի հետեւեալ սկզբունքը, թէ անաչառ մեղմութիւնը պէտք է լինի մանկավարժական կանոն: Այս կանոնին համաձայն պէտք է ասել դաստիարակչին եղիր անաչառ, մինչև անգամ խիստ՝ որ կարողանա բարի լինել:

Ժ. Ժ. Բոսսո: Ռուսոն ծնունդ ժընէվում 1712 թ. յունիսի 28-ին: Նա գրեց մի ամենակարեւոր, ամենազեղեցիկ գիրք իր դարու մանկավարժութեան մասին: Պա այն մարդկանցից է, որոնք խիստ ներգործել են մարդկանց խելքի և մանկավարժութեան եղանակների վրայ՝ ոչ միայն Ֆրանսիայում, այլ և Զուլցարիայում, Գերմանիայում, ամբողջ Եւրոպայում՝ նաև Ամերիկայում:

Սոսեյ Ռուսոյի մասին մանկավարժական տեսակէտից կը նշակէ խօսել նրա «Լմիլ» անուն գրքի մասին: Այս գիրքը, որ բաղկացած է 7 գլխից՝ տպագրուել է հետեւեալ վերնագրով. «Լմիլ կամ կրթութեան մասին, աշխատութիւն Ժ. Ժ. Բոսսոյի» — Ժընէվի քաղաքացու:»

Պիժոհ լինելով այն հասարակութիւնից, որ շրջապատում էր նրան և ցանկանալով տեսնել այդ հասարակութիւնը բարեփոխուած, նա չի բաւականանում խիստ մեղադրանքներով, նա սկսում է պտուել և գտնում է մի ազնու միջոց հասարակութեան բարեփոխման համար: Այդ միջոցը կրթութիւնն է:

Հասարակութեան ուղադրութիւնը դարձնելով ժամանակակից ընդունուած կրթութեան վատ եղանակի վրայ, ձեռնարկելով Ռարէի և Մօնտէյնի հազիւ նախագծած փորձերին, վե-



բաժնելով կրթութեան գործը պարզ և խելացի սկզբունքի սովորոցեց հետազոտել բնութիւնը ուսումնասիրել կարեւոր պահանջները և երեխայի մտքի ու հոգեւոյ զօրութիւնը: Ռուսսօն մեծ ծառայութիւն արեց՝ նորադոյն մանկավարժութեան համար:

Ուրիշներն էլ կարող էին ուսումնասիրել այդ առարկան: Բայց ոչ ոք չէր կարող գործադրել նոյն եղանակը փայլուն ոճը, սէրը, պերճախօսութիւնը:

Ռուսսօն չէ գրել իր «Իմիր» ի նկատի ունենալով նախակրթական գործը: Նա չի մտածում ուսումնարանի մասին: Նրա կարծիքներն ուղիղ են, և կարելի է մասնաւոր կերպիւ օգտուել նրա այդ գրութեան քիչ և գործադրել ուսումնարանների համար:

«Իմիր» է մի հարուստ ազնուատոհմ որր տղայ, յանձնուած դաստիարակչին, որ նրան պահում է գիւղում: ձեռքը գիրք չէ տալիս: ուսումնարան չէ ուղարկում: Թողնում է առանց ուսուցչի, առանց ընկերների դնում է իր աշակերտին մի այնպիսի տնել գրութեան մէջ, որ ոչ մի յայտնի աշակերտական գրութեան չի համապատասխանում: Աշակերտը ինքը գտնում է, աւելի ձիշտ ասել, հնարում է այն ամենը, որ դարեր շարունակ մարդիկ հնարել են, այն է՝ գիտութիւնների, բարոյական սկզբունքների, կրօն և այլն:

Չընայելով որ այդ կրթական եղանակը շատ տարօրինակ է, բայց և կարելի է օգտուել Ռուսսօյի մանկավարժական դիտողութիւններից: Այդ դիտողութիւնները վարմանալի կերպով նպաստեցին հասարակաց և մասնաւոր կրթութեան եղանակների բարդմանը: Մանկավարժները հանեցին այդ գրքից այն հիւթը, որ գործադրելի էր:

Ռուսսօյի կարծիքով ամենակարեւորն է ուսումնասիրել երեխային, որ կարելի լինի նրան ուղղութիւն տալ: Երեխայի բնաւորութիւնը քիչ են ծանաչում և այն սխալ զաղափարները, որ ունեն երեխայի մասին՝ զցում են աւելի մեծ սխալների մէջ: Գիտնականները զբաղուած են նրանով, թէ մարդս ինչ պէտք է գիտնայ,

առանց մտածելու թէ երեխան զեռ կատարեալ մարդ չէ: Ռուսսօն ասում է, թող իմ աշակերտին դարձնեն եկեղեցական, փաստաբան, ինձ փոխ չէ: Այդ կոչումներից առաջ բնութիւնը մարդուս կանչում է դէպի կեանքը: Իմ ցանկութիւնն է սովորցնել նրան կանոնաւոր կեանք վարելու: Ես համոզուած եմ, որ երիտասարդը դուրս գալով իմ ձեռքի տակից, չի լինի ոչ պաշտօնեայ, ոչ զինուոր, ոչ էլ քահանայ, նա ամենից առաջ կը լինի մարդ՝ ինչպէս հարկն է: Հէնց դրան էլ ամենից առաջ պէտք է ձգտի մարդս: Յետոյ նա կարող է դառնալ՝ ինչ որ կամենում է և ամէն տեղ էլ նա իր տեղումը կը լինի: Ահա այս նպատակին պէտք է ձգտեն բոլոր ուսուցիչները: Այդ մի այնպիսի դաղափար է, որի դէմ չէ կարելի վիճել, որևէ կարող է մանկավարժական եղանակի մէջ մեծ փոփոխութիւններ ներմուծել: Ամենակարեւորն, ասում է Ռուսսօն, կրթութեան մէջ՝ մարմնի մարզումն ու ամրացումն է: Ամրացումը, որից կախուած է բոլոր մնացածը՝ միշտ արհամարհուած է եղել, դատապարտուած է եղել արգելման առողջապահական վատ կանոններով, ձնշողութեամբ, երկարատե դասերով, զրազրութեամբ, որոնց ժամանակ խեղճ երեխան թուլացել, գունատուել է: Ռուսսօն բարձրացնում է իր ձայնի այս տխուր երևոյթի դէմ և հանդիսանում է երեխայի պաշտպան, մատնացոյց անելով այդ անբնական երևոյթի վրայ: Նա ասում է. «մարզեցէք, ամրացրէք երեխայի մարմինը, պահպանեցէք նրան առողջ, որ կարելի լինի դարձնել նրան զգաստ, խելացի: Նա պէտք է պարապի ձեռագործութեամբ, աշխատի, վարժուի, բղաւի, շարժողութեան մէջ լինի, որպէս զի իր ուժերով մարդու նմանի և զրանից յետոյ նա մարդ կը լինի խելքով:

Ռուսսօն ասում է, որ բաւական չէ միայն ամրապնդել մարմինը, այլ խելքն էլ պէտք է մարդել՝ նրան ուղիղ ընթացք տալով:

Ռուսսօն արգելում է երեխայի ձեռքը զիրք տալը մինչև նրա 12 տարեկան հասակը, նրա



գիրքը բնութիւնն է: Բնութեան մասին պէտք է տալ նկատողական դասեր: Նրան շրջապատող բնութիւնը պէտք է զարգացնէ նրան, տեսնելով սովորի, հարկաւոր չէ, որ նա գիտութիւններ սովորի, այլ պէտք է նրան սովորցնել, որ նա գիտութիւնները սիրէ, սովորցնել ուսումնասիրելու եղանակներին (մէդոտ): Երբ գիտութիւններ ուսումնասիրելու ծաշակն արդէն զարգացած լինի՝ նա ինքր կ'ուսումնասիրէ գիտութիւնները: Այդ կերպով կ'ըզարգացնեն երեխայի մէջ սկզբունքի ոգին, բնաւորութիւնը, ինքնաձանաչութիւնը, գործող խելքը, բանաւոր կամքը և արթուն խիղճը:

Բուսսօն կ'ամենեւում է, որ ամեն մարդ, ինչ դասակարգի էլ որ նա պատկանելիս լինէր՝ սովորի մի արհեստ, որով նա կ'արողանայ իր համար հաց աշխատել: Նայեցէք թէ նա ինչ ուղղութիւն է տալիս երեխայի հետաքրքրութեանը, նրա խելքին, հնարագիտութեանը, նախատեսութեանը: Տեսէք թէ ինչպէս է կ'ամենում կ'ազմակերպել նրա բնդունակութիւնները, որ նա կ'արողանայ ամեն բան տեսնել, կատարել: Այդ կերպով երեխայի մէջ ցանկութիւն կ'ըծագէ ամեն բան ծանաչելու: Ամեն բանի պատճառը գիտնալու, նա ոչինչ չի ենթադրի և չի ընդունի մի բան, որը նա չի հասկանում:

Սրանից հետեւում է, թէ նա ինչ կ'արեւորութիւն է տալիս իրերի ուսումնասիրութեանը: Սկսելով ամրապնդել երեխայի մարմինը և զարգացնել նրա զգայարանները, յետոյ նա զարգացնում է նրա խելքը, դատողութիւնը, այդ կերպով նա զարգացնում է նրա մարմինը և մտաւոր ու հոգեկան կ'արողութիւնները: Ուրեմն նա երեխայից կ'ազմում է մի էակ, որ գործում է, մտածում է և մարդ դառնալու համար նրան մնում է միայն, որ նա կ'արողանայ սիրել և ունենալ ազնիւ զգացմունքներ:

Բուսսօն զարմանալի է, երբ խօսում կ'ըլլի թութեան ողջմտութեան և ընդունակութիւն-

ների բնական զարգացման մասին, երբ նա պնդում է, որ հարկաւոր է ամրացնել երեխայի հոգին և մարմինը, որ ծնւած է տգէտ վարժապետը:

Նա իրաւացի է, երբ քակում է երեխայի կապանքը, մերժում է անգիր անելը, ընկ խօսքեր անգիր սերտելը, սովորելու մեքենական ձևերը, վաղաժամ գիտութիւնների սովորցընելը, որոնք չեն կարող արմատ բռնել երեխայի ուղեղի մէջ: Նա իրաւացի է, որ պահանջում է, թէ վարժապետը պէտք է միջոց տայ աշակերտի բնութեանը, որ ինքնուրոյն աճէ, զարգանայ, որ վարժապետը լաւ ուսումնասիրէ նրա բնաւորութիւնը աշխատէ նրան հետաքրքրել, ցոյց տայ, հասկացնէ նրան ուսումնասիրութեան օգուտը, տայ նրան գիտողական ուսում, ծանօթացնէ նրան կեանքի պիտոյքների հետ, դրբերից դուրս նրան ուրիշ կեանք էլ ցոյց տայ, հասկացնէ ամեն բանի կ'արեւորութիւնը, օգտակարութիւնը, տայ երեխային զազափարներ, զգացմունք, սովոր, ցոյնի կ'արգապահութիւն և պարտաձանաչութիւն:

Երեխայի կեանքը նմանում է հասակն առած մարդու կեանքին, նա բնդունակ է ունենալ նոյն զգացմունքները: Երեխաների աշխարհ էլ մի փոքրիկ աշխարհ է, ուր պատահում են նոյն փոփոխութիւնները, հրապուրքը և նոյն մրցումը: Երեխաները պէտք է դնուած լինին նոյն գէնքերով, պէտք է ունենան խիղճ, սէր, դէպի բարին, պարտաձանաչութեան զգացմունք, անհաշիւ եռանդ, դէպի առաքինութիւն: Մարդը այդ բոլորին բնդունակ է, երեխան նոյնպէս: Գլխաւոր բանն է, որ ուսուցիչը կ'արողանայ չափել գործադրութիւն, ոյժը, գործ, դնել համապատասխան լեզու և պահանջ երեխայի հասակին համաձայն:

Ահա սոքա են Բուսսօյի գրեւորքից յաջող ընտրուած իրաւացի զազափարները, որ ներկայացրինք այստեղ՝ որպէս ընդհանրացած գաղափարներ, որոնք մեծ ծառայութիւն են ա-



րել նորագոյն մանկավարժական գործը հաստատ հիմքի վրայ դնելու համար: Այդ գաղափարներն արձագանք գտան ամեն տեղ: որովհետեւ հարկաւոր ժամանակին ծնունդին: Սկզբից մինչեւ Վէստալօցցին և Ֆրէօբէլը այդ գաղափարները նպաստել են Վերամանրայում մանկավարժական եղանակները վերանորոգելու: Տիկին Մեկար Վր Սոսիւրը, Հայր Փերարը և բոլոր Ֆրանսիական հեղինակները, որոնք պարագիւ են մանկավարժութեամբ՝ ընթացել են նոյն ծանապարհով: որ ցոյց է տուել Ռուսոյն: Ինչ որ Վոմենիուսը, Լարշէն, Ս'օնտէյնը նախագուշակել են: Ռուսոյն դրանց մասին խօսել է աղաղակելով կրքով: Սա յաջող կերպով համաձայնեցրել է ձշմարտութիւնը նոր կարծիքների և առաքինութեան հետ: նա դիմել է մանկավարժների ուշադրութիւնը կապուել են կուսակցութիւններ և դրանցով առաջացել է մի ամբողջ դրականութիւն: Թեպէտեւ Վարիլի տրեքպիսկոպոսը գատապարտել էր և Սրնէվում այրել էր տուել Ռուսոյի Լմիլը անուսով դրուածքը և հեղինակին բանտարկութեան գատապարտել: Իւրեւից էլ աքսորել էին նրան: այնուամենայնիւ նրա հապառակորդների և համամիտների աչքում Լուլն այնպիսի մի պատուական դրուածք էր հասարուում: որ մանկավարժական դրականութեան մէջ առաջնակարգ տեղ էր բռնում: ուստի Ռուսոյի մի քանի մաքելը սլշտ օրինակելի կը մնան մարդկային կրթութեան գործի համար:

(Հարունակելի):

Բժ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԵՆԵԱՆ,



## ՇԱՐԼԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ



որ՝ բառս Շարլան, ինչպէս տեսանք, գործ է դրուել այնպիսի տօների երգերի վերայ, որոնք անգուղական են իրենց տեսակի մէջ. այսինքն, այդ տօները իրենց համանման տօների նման չունեն ոչ Սրհնութիւն, ոչ Հարց, ոչ Սեծացուցէ, ոչ Ողորմեա, ոչ Տէրերկնից, ոչ Ճաշու և ոչ Համբարձի. և եթէ ի յիշատակ և ի պատիւ ոմանց սրբոց վերջին դարերում դրուել են Սրհնութիւն, Հարց, Սեծացուցէ, Ողորմեա, Տէրերկնից, Ճաշու և Համբարձի և դրուել նրանց ծակատին Եւրոպայի այս մակղիրը ոչ եթէ այդ նոր յաւելացած շարականների վերայ է դրուած: այլ իւր հին կամ նոր Սանկունքի վերայ. զօմեր ձեռքում դստուած Շարականը ունի պաշտելի կոյս Սանդիտի վերայ յօրինած նորագոյն Սրհնութիւն, Հարց, Ողորմեա և Տէրերկնից, և ապա կրճատ ձեռով «Քե պարծի այսօր» իւր հին Սանկունքը իսկ ընդհանուր ծակատին դրուած է: «Շարական. Սրբոյն Սանդիտո. Աւրհնութիւն» թղ. 165:

Այս խորագիրը մենք պիտի հասկանանք ոչ եթէ նոր է և գործ դրուած ընդհանուրի համար: այլ իւր հին Սանկունք «Քե պարծի այսօր» խորագիրն է: և ճիշտ այսպէս էլ դրուած է տպագիր Շարականի մէջ, չունենալով իւր կողքին ոչ Սրհնութիւն, ոչ Հարց, ոչ Ողորմեա և ոչ Տէրերկնից, որոնք եթէ լինէին, պէտք էր ըստ օրինի դնել կանոն կամ կարգ խորագրերը, որոց տակ ընկնում են Սրհնութիւն, Հարց, Ողորմեա, Տէրերկնից ևն, ինչպէս տեսանք իւր տեղում:

Այսպէս ուրեմն հին շարականների ընդհա-